ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 264 -Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1910-Ն որոշումը և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի հունվարի 29-ի թիվ 40-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 5 նիստի արձանագրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից՝ սոցիալական աջակցության նպատակով, թվով 19 քաղաքացիների հատկացնել 1110000 (մեկ միլիոն մեկ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ միանվագ դրամական օգնություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

/Վ.ԱՐՍԵՆՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 28
ք. Եղեգնաձոր

